ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/7323-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-1225-23.12.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Հաշվի առնելով, որ Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, միևնույն ժամանակ հոդվածը լրացվում է նոր 3.1-ին մասով, հետևաբար Նախագծում կատարվում է փոփոխություն և լրացում, ուստի առաջարկում ենք Նախագծի վերնագրում լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը:

2. Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և ««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի կարգավորումները համապատասխանեցնել միմյանց՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին:

Մասնավորապես, հաշվի առնելով այն, որ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով պետական տուրք է սահմանվել նաև ապրանքի ծագման հավաստագրի, դրա կրկնօրինակի տրամադրման կամ փոխարինման համար, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, առաջարկվում է «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի չհամարակալված պարբերությունը շարադրել որպես Օրենքի 14-րդ հոդվածի 3.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Ապրանքի ծագման հավաստագրի, դրա կրկնօրինակի տրամադրման կամ փոխարինման նպատակով գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով:»:

3. Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ ապրանքի

ծագման հավաստագրերի տրամադրման և փորձաքննության անցկացման, փորձաքննության մարմիններին ներկայացվող պահանջները և փորձագետների որակավորման ու քննության անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը, ուստի առաջարկում ենք նախատեսել նաև անցումային դրույթ՝ սահմանելով Նախագծի 1-ին մասով նշվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետը:

Ըստ այդմ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժ մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանվածված կարգավորումը տարածվում է 2027 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:»:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Հաշվի առնելով, որ Նախագծով կատարվում են 1-ից ավելի լրացումներ, առաջրկում ենք նախագծի վերնագիրը խմբագրել է «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինվել է «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի հոդվածներով «հավաստագիր» բառից առաջ չի օգտագործվում «երկրի» բառը, ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 71-րդ կետի՝ «Ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման համար», 73-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից ապրանքի ծագման երկրի հավաստագրի կրկնօրինակի տրամադրման համար» և 74-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինի կողմից ապրանքի երկրի ծագման հավաստագրի փոխարինման համար» նախադասություններից հանել «երկրի» բառը:

«Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ